

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ Ի Ս. ՂԱԶԱՐ

Ուխտավար մը. — Առաջարկ Մազէյի. — Դիւանագրութիւնը. — Պայրընի նամակներ. — Հետապնդումները. — Պայրընի ղեկ ի Ս. Ղազար. — Առաջին խօսակցութիւնները. — Հ. Յարութիւն Ազգերեանի Որսագրութեան. — Մտաւորութիւնը վանքին հետ. — Տպաւորութիւններ արտասահմանի մէջ. — Առաջարկ մը Հ. Ղուկաս Խնճեհեանէ. — Մեծօրհնանդէի հարգափորձը. — Պայրընի հայերէնագիտութեան աստիճանը. — Իր մասնացած բարոյական նպաստները. — Հրաւեր մը.

Ոչ մէկ օտարական որ վննետիկ կը ժամանէ՝ հիանալու Տոժերու փառքին և Աղբիւրականի թագուհւոյ պերճանքներուն վրայ՝ չի՝ մեկնիր հոնկից մինչև որ այցելութիւն մ'ալ չի տայ այս գեղածիծաղ կղզեկին, որ զուարթն ու գեղեցկագոյնն է հայելանման Լճակիս զիրկը ցանոռած ներուն միջև:

Առաջին վայրկենէն իսկ անսովոր հետաքրքրութեամբ կը լեցուի ան: Իբր զլիսաւոր առաջնորդ ունի համառօտ կամ ընդարձակ Ուղեգիրը (Guide) մը, մերթնաւ առ այդ մասնաւոր անձեր, որոնք կ'ընկերեն իրենց ու ցուցնելով կը բացատրեն մէն մի վննետիկան հմայք՝ որ կը գտնուի արուեստի կամ բնութեան ծոցին մէջ: Ուրեմն կայ ինքնին այցելուին դիտաւորութեան մէջ անպատճառ տեսնել Հայոց վանքը:

Եթէ Հայութեան համար զանազան տեսակէտներով ուխտատեղի մ'է ան, պահարան մ'է թանկագին նշխարներու և ազգային զանձուց, Անգղիացւոյն և անգղիախօս ազգերուն՝ իրաւամբ ուխտավար մ'է, Ս. Ղազարու մէջ ըլլալով Պայրընի ամենէն աւելի ցայտուն ու խօսուն յիշատակը: Ոչ միայն անգղիացիօսին, այլ ամէն օտարալեզու անձի համար կարծես անխոսափելի բնածին պարտք մ'է այն, պահիկ մը նուիրելու մտածումի և խորհրդածութեան՝ Պայրընեան յուշերու շուրջ: Քաղաքիս Ուղեգիրը անգամ չէ՞ որ զայն կը ջանան օտարականին ուշադրութեան յանձնել ամենէն աւելի ազգեցիկ շնորհով կամ խորհրդաւոր ակնար-

կով մը, որպէս զի մի գուցէ վրիպի անոր առաջադրութիւններէն դեռ ուրիշ կարևորագոյն այց մը. մի գուցէ զրկուի շահազրգուստի վայրէ մը, անփոխանակելի վայելքէ, հաճոյքէ:

Այդ ուղեգիրներէն թրեւիզ տպուած օրինակ մը մեր առջև: Հոն — մինչ մէն մի մաս սոսկական վերնագիրներ ունի — Ս. Ղազարու էջը կը բացուի սա վերնագրով. «Որ որ Պայրըն երազեց» Անշուշտ միևնոյն տեսութենէն մղուած անգղ. մատենագիտութեան առաջարկն ուղղած էր. «Եթէ ամբողջ Եւրոպոյ մէջ կայ տեղ մը՝ ուր, «յետ Լոնտոնի և Միսսոլոնկիի, պէտք է Պայրընի արձանը կանգնել՝ այդ վայրը «վննետիկ է, վննետիկ ամէն կողմը «կրնայ ըլլալ, Լիտոյ, Հասարակաց Պարստեզը կամ Ս. Ղազարու կղզին: Բայց «եթէ վննետիկեցիք անտարբեր են արձան «նին տեղւոյն համար, թող Հայերը կանգ «նեն զայն՝ Աստուծոյ անուանը՝»:

Պայրընի այցը և հայերէն սորվելը Ս. Ղազարու մէջ՝ աշխարհածանօթ է արդէն. ամէն բանէ առաջ՝ վննետիկն առ Մուր և Մըրրէյ գրած նամակներուն միջոցաւ. սակայն ցարդ մանրամասնութիւն մը չի կար մէջտեղ: Մազէյի գրքոյկին մէջն ալ տեսնելով Պայրընի խիտ ցանցառ է. հոն՝ մեծ մասամբ՝ վանքիս հարկանքի պատմութիւնն է որ տեղ գրուած է. նոյնը կրնանք ըսել

1. Lord Byron at the Armenian Convent. Venice 1876. էջ 10.

ուղեգիրքներու և 1846 տարւոյ Բազմա-վէպի մէջ յօդուածին համար (էջ 296)։ Ուրախ ենք ուրեմն, որ Բանաստեղծին այս յորելեանը պատճառ կ'ըլլայ մեզ՝ ըստ կարելւոյն հրապարակ հանել մանրամասնութիւններ ու ներկայացնել Հանրութեան առջև ստոյգն ու ամենաճիշդը, համեմուած՝ շատ մը հետաքրքրաշարժ տեղեկութիւններով։ Այդ ամէնչէր ըսենք, հաստատուած է Մենաստանիս Դիւանի վաւերագրերուն վրայ, որոնց զլուխն է՝ Իրբև ստուգագոյն հարբեր՝ նոյն ինքն Պայրընի Մխիթարեան Ուսուցիչը քաջ անգղիագէտ Հ. Յարու-թեան վ. Ազգերեան, եղբայրը միւս մեծանուն Մխիթարեան Հ. Մկրտիչ վ. Ազգերեանի։

Բնականաբար այս տեսակէտով հաւասար առաջնակարգ վաւերագրերն են Պայրընի հրատարակուած Նամակները։ Այս թուղթերէն հայկական նիւթեր շօշափող ինչ ինչ մասեր ժամանակաւ լոյս տեսած են վանքիս Տպարանէն՝ միայն անգղիերէն լեզուով։ Սակայն ներկայ դարադարձին առթիւ հարկ դատեցինք մեր կողմանէ նոր խուզարկութիւն մը ևս ընել Պայրընեան նամակներուն անգղիերէն հաւաքածոյին մէջ, և զո՛հ ենք որ զտանք աչքէ վրիպած հակիրճ՝ բայց յարգել հայկական մասեր։ Ներկայ Բազմավէպին մէջ նախընթացնելուն հետ անոնք ալ միասին նոր աշխարհաբար թարգմանութեամբ մը հրատարակուած են։

Հազար ութ հարիւր տասն և վեցի ձմեռը դեռ վենետիկ չկոխած՝ քաղաքս կը հասնի առողջազգեղ անգղիացի մտաւորական մը, մշտագորուն բանաստեղծը Լորտ Պայրըն։ Գրեթէ նոյնմբերի վերջալոյսն է։ Ամէն օտարականի նման Պայրըն ալ կը հրապուրուի Հայ կեդրոնի մը դիւթանքէն, ինչպէս կ'ըսէ. «Որիչ ձաւ-

որդիերոս նման շատ հետաքրքիր էի Ս. Ղազարի Ընկերութեան մասին»։ սա բացառութեամբ, որ մինչ լոկ բուռն հետաքրքրութիւն ու վայելելի փափագ մ'է ուրիշ այցելուներ ըլլա՞ծողը՝ Պայրըն քան զամենքը կը մղուի ուժգին կարօտանքէ մը, կարծես իր այնծուփ միտքը խաղաղաւէտ սրգով մ'որորելու, իր բարոյական ուժը կազդուրելու Մխիթարականութեան գեղազուարճ բուրաստանին մէջ։

Թէ՛ ինչ տրամադրութիւններով Պայրըն Դքսական քաղաքը կը հասնի՝ ինքն իսկ կը գրէ արդէն. «Երբ 1816-ին վենետիկ հասայ, այնպիսի մտային վիճակի մը եւս յարկուած էի, որ պէտքը կ'ըլլար զգայի ծանր գրադումի, և այնպիսի գրադումի, որ երեսակայտարեան քիչ սպասեց թողոր և ձեռնարկած հետապնդումիս համար քառասուն յո՞ւսարօրին ընծայեյ» (Պայրընի Յաւաքարան Հայ Քերականութեան¹)։

Ահա այս տրամադրութիւններով վեւենետիկ հասնելէն քիչ օր վերջ, ամպոտ օր մը, իրկուանս մօտ, կոնտուլա կը մտնէ այցելելու արեւելաշունչ այդ կղզին Ս. Ղազար։ Պայրըն կ'ընդունուի անգղիագէտ վարդապետէ մը. — Հ. Յարութիւն Ազգերեանն է, անոր ապագայ վարժապետը։ Երկու ժամի չափ սիրալիլ հիւրընկալութիւն կը գտնէ վանականներէն և ապա հրաժեշտ կու տայ՝ կրկին վերադառնալու խոստումով։

Յաջորդ առաւուս կոնտուլայով վանք կը հասնի դարձեալ, և Հ. Ազգերեանի հետ առաջին խօսակցութիւնները կ'ըլլան Հայոց Պատմութեան ու Մատենադրութեան շուրջ։ Իր դիւրագգած միտքը խոշտանգուած ժողովուրդներու ճակատագրով հետաքրքրուելով՝ աւելի ևս կը բռնկի, աւելի ևս կը յորդորուի վայրկեան մ'առաջ իր գրադանքն ընելու մեր ազգին

1. Պայրընի Յաւաքարան Հայ Քերականութեան։


2. Հ. Ս. Ազգերեան՝ ի մէջ այլոց կ'ըսէ, որ Պայրըն կ'ուզէր սորվիլ հայերէն լեզուն՝ Հայ Բանաստեղծութեանց ընտիր հատուածները կարգալու համար իսկ Հ. Ղուկաս Ինճեճեանի մէկ նամակին մէջ Բանաստեղծին

վերագրուած ուրիշ նպատակ մ'ալ կայ. «Լորտ առաջ առ ի ձեռն - կ'ըսէ նա - քէ Լորտ Պայրըն ուսանի եւ ուսուցանի կամի անգղիացեց զնայնական բարբառ» (Անտիպ թուղթ Մայր Գիւանի վանացս առ Արքեպիսկոպոս հայր. 1817 Ապրիլ 10)։

լեզուն ու պատմութիւնը, և այսպէս իբրև նոր պատճառ մը ևս՝ իր միւս շարժառիթներուն վրայ կ'աւելնայ, որոնցմէ մղուելով նոյն այցին մէջ իսկ կ'առաջարկէ իր խօսակից վարդապետին, թէ կարելի՞ է արդեօք վանքին մէջ բնակիլ, առանց որ և է ծանրութիւն տալու անոր: Այս մասին վանականը տատամած կը թո՛ւն՝ նկատ

զրչէն. զայդ յառաջ կը բերենք նոյնութեամբ անոր անտիպ մատենիկէն՝ որ է «ԻՆՔԵԱՊԱՏՏՈՒՄ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ»:

Ի 1 դեկտ. Lord Byron գերահռչակ և աշխարհաքարոզ բանաստեղծ Անգղիացի՝ զորոյ զգրուած գնէին ի կշիռ ոսկւոյ, եկեալ ի տեսութիւն վանացո՝ խնդրեաց ուսանել ի նմանէ՝ զՀայկական քարբառ. և կամէր ևս բնակել ի



Պայրըն Մի. Հայրերուն մէջ
Byron on the terrace with the Fathers of S. Lazarus

տնով զանազան պարագաներ ու վանական օրէնքները. լայնօրէն կը խոստացուի սակայն ուրիշ ամէն դիւրութիւններ ընծայել՝ եթէ կարենար ամէն օր վանք հրամայել. Հաւանելով բանաստեղծը՝ անմիջապէս անոր կը տրամադրուի իբր ուսուցիչ Հայերէնի Հ. Յարութիւն Ազգերեան, և ըստ տեղեկութեան Մազէյի՝ ուսման և հանգիստի համար ալ երկու սենեակներ՝:

Բայց դիմենք բուն իսկ վաներական աղբիւրին, որ ուղղակի կը բոլի նոյն ինքն Պայրընի վերոյիշեալ վարժապետին

վանս: Բայց ֆանդի ոչ ոք ի Միաբանից հանաչէր զիս ցայնսմ, ասացաւ նմա զալ ի վենետ

1. Միաբանութեան կողմանէ Պայրընի մատուցուած հիւրընկալութեան ամբողջ շրջանին վրայ զազաւար մը տալու համար՝ կը բերենք հոս Փերթոյին մէկ յանձնարարագրէն հետեւալ տողերը. կը զրէ Հ. Առքեա Սոմալեանի և Հ. Սարգիս Թէոդորեանի մասին առ Մր. Մարթէ. «Իրէ անոց ո եւ է ծառայութիւն մը կարեւոր ընել՝ ժողային պաշտօնից եւ կամ Արեւելեան Բնիկութեան քեզի ծանօթ անձերու միջոցաւ, յոսում րէ զիս այնքան երախտապարտ կը բողոս, որքան իրենց Միաբանութիւնը արտակարգ ուղարկութիւն եւ քարեկամութիւն ցոյց տուաւ ինձի՝ վենետիկ հասնելու ի վեր» (8 Յունիս 1817):

2. Միշտ երբորդ դէմքով կը խօսէ Հ. Յարութիւն իր անձի մասին,

կոյ զօր ամենայն, և այնպէս ուսանել, էւ նա սկսաւ զալ աւուրս յիսուն¹, և ուսանէր ժամս երկուս կամ երիս, մանաւանդ թէ անցուցանէր ի գրոյցս ի սփոփանս անձին: Էր նա երիտաւար յաշիւփ, զուարթաբարոյ և բոցակն. և թէպէտ կաղ էր միով ոտամբ, բայց գեղեցիկ էր զիմօք: — Զկնի ուսանելոյ զվերձանութիւն տառից՝ ասաց ցլարժապետ իւր տալ տպագրել



ձ. Թարութիւն Վ. Ազգերեան
Fr. Dr. Paschal Aucher Byron's Teacher

իւրովք ծախիւք զԱնգղիական և զՎայերէն քերականութիւն իւր, զոր յօրինեալ էր ի Լոնտոն. և ինքն ևս սրբագրէր ընդ նմա զթերթս տպաւ:

գրութիւնն: Ապա խնդրեաց ի նմանէ թարգմաւսնէ յիտալական բարբառ զընտիր հատուածս բանաստեղծութեանց Հայոց, յոյր սակս իսկ կամէր նա ուսանել զհեզու նոցա: Թարգմանեաց Հ. Թարութիւն ինչ ինչ հին և նոր, յորոց միջի սակաւութք ևեթ հասնեցաւ ընդ Հռոմայինդ երգն Հռիփսիմեայ ի Շնորհաւոյնս: — Ապա յորդրեաց զնա յօրինել միւս ևս քերականութիւն Հայերէն և Անգղիական յօգուտ ազգայնոց իւրոց: Էւ նա արար զայն շարադրեալ զկանոնսն յիտալական բարբառ. զորս էյեղ նա յԱնգղիականն: — Զկնի աւարտման քերականութեանն թարգմանեաց նա ի Լատին բարբառոյ զերկոսին երրորդ թուղթս Սրբին Պօղոսի առ Կորնթաւկանն: — Զկնի աւարտման ինչ բանից ի մերոց նախնեաց ձեռնտուութեամբ վարժապետի իւրոյ, զորս և կամէր զնել ի քերականութեան անդ ի կըրթութիւն անգղիացւոց: — Ապա ի խնդրոյ վարժապետի իւրոյ յօրինեաց նա զՅատաշարաւսնութիւն այնք քերականութեան յԱնգղիական բարբառ. այլ քանզի երգիծանէր նա ի նմա զՏանկիս և զՊարսկիս, չկամեցաւ Հ. Թարութիւն տպագրել զայն: Էւ նա թէպէտն խոստացաւ յօրինել միւս ևս անկնաս, բայց անդէն լծաւ սիրտ նորա. նմին իրի և ոչ ևս կամեցաւ զալ ի վանս: Էւ այնպէս միաց քերականութիւն գրչազիր, և ինքն ոչ ետ զխոստացեալ դրամսն վասն տպագրութեան սորինս: — Յաւուր միում չոքաւ ի սենեակ Գերապայծառ Աբբաճօրի ի յարգութիւն նորին: Հասնեցաւ ընդ տեսիլ կերպարանաց նորա և ընդ բանս: Էւ յալլում աւուր ի շրջել անդ ի գննութիւն գրատանս՝ խոստացաւ վարժապետի իւրում յղել յԱնգղիոյ զընտիր ընտիր մատենագիրս Անգղիացւոց, զի զարդարեացի նոքօք գրատունն: Բայց նա զկնի սակաւ ամաց մնաւ ի Յունաստան: — Ի բերան Բաւաստեղծիս նոյն էր Մովսէս, Քրիստոս, Մահւմէտ, Լուտեր, Կալվին, Վլոթէր, և Հաւատք իւր Անգղիական. թող և զանարժան գնաց նորա ի վենետիկ քաղաքի: — Այլ ի սակս ուսանելոյ նորա ի վանս՝ հոչակեցաւ և անուն վանացս. մանաւանդ վարժապետի նորա. և բազումք յԱնգղիացւոց և յալլոց ազգաց զայն ի վանս տա

1. Պայրընի առաջին այցելութեան և Հայ ուսման սկզբնաւորութեան համար 2. Ազգերեանի այդ նշանակած թիւն (1816 ղեկու 2) ինքնին կը հաստատուի Բաւաստեղծին կողմանէ, որովհետեւ կը գրէ առ Մարտի 1816 ղեկու 9-ին, թէ «Այսպէս ևս ասաց կը տանիմ Հայերէն Լեզուի ուսումը»: «Առտուններ կոնսուլայտը Ս. Ղաւարս կ'երթամ»: Բայց աստի՛ կ'որոշեցուցը Թուղթերուն իր Թարգմանութեանց մասին կը գրէ. «Եւ ինչս Անգղիերէն քարգմանեցի 1817-ի Յունաստան ևս Փնարոսար տախտակուն մէջ, Ս. Ղաւարու վանքին մէջ»: Սակայն նա մտնը կը ցուցնեն միանգամայն որ Ազգերեանի 50 օրերու հաշիւը անհիշող է:

2. Պայրընի այսպէս կը լուսարբանէ. «... աշիւ տաքիւս ունիւն Եւսեմ Լատին բնագիրը, որ սակայն շատ տեղ աղաւս

աղեալ և ոչ շատ ալ պահածներ ունի» (տես Նոտակները):

3. Հ. Ազգերեանի այս ենթադրութիւնը սխալ կը թուի. Պայրըն 1817 Մարտ 25ի նամակով կը գրէ. «Անցեալ տարի՝ հիւանդութեանս պատճառաւ չկրցայ տեղէն չորս մի և ոչ ալ մայիսին յարձանակել» (տես Նամակները):

4. Կոնսուլնէ յետոյ Հ. Թարութիւն իր Որպորութեան Դիմօրոշարեանց մէջ, թէ «Նա ինչեւ Լօրա Պայրըն ետ մնա հազար ֆրանք՝ երբ՝ վասն տպագրութեան Անգղիական և Հայ քերականութեան, եւ երբ ի փոխարին վասն տալից վարժապետութեան նորա» (էջ 561): Հիշել տաւ իւր խոստացուած գումարն է այդ, ինչպէս կ'ըսէ Պայրըն. «Իմին 1000 ֆր. միայն սխալ արեմ» (1817 Յունաստան 2):

ի տեսանել զնա — Զկնի մահուան նորա ընծայեցին Անգղիացիք ի լոյս և զթուղթս նորա, զորս գրեալ էր ի վենետկոյ ի Լոնտոն առ գրաւ վաճառ իւր Mr. Murray »:

Հայր Ագգեբեանի այս հեղինակաւոր տեղեկութեանց մասին խորհրդածութիւններ ընելը մեր ընթերցողաց թողուով՝ կ'անցնինք մենք ուրիշ բան մը դիտելու, թէ ինչ աստիճանի սերտ եղած է մտերմութիւնը Պայրընի և Ս. Ղազարու Հայրերուն միջև: Հ. Ս. Ագգեբեան կը գրէ 1817 փետր. 15-ին առ Ագոնց Աբբաճայր. « Ուրախ եմք ընդ թարի թարի իսորհոյրդս յորտիկն՝ »: Շատ բնական հետեանք մ'էր այս, երբ մտածենք որ ատեն մը շարու նազարար Ս. Ղազարու մէջ ապրած է. « Զմուռ մը ամբողջ — կ'ըսէ իր նամակներուն Հրատարակիչը — ամեն աստուղորս ելլելով ստանձին ու կոնտորա մտնելով՝ ուր ինքք կը թխալարէր՝ կը դիմէր դէպ ի Հայոց կղզիք »: և հոս ժամերը կ'անցընէր մաս մը Հ. Յարութիւնի հետ, մաս մը վանականներու հետ, որ զինքը կը շրջապատէին, մաս մ'ալ կը նուիրէր՝ կանանքի աշխատանքներու և գաղտնիքներ խորհրդածելու պարտզին մէջ խորհրդաւոր ու չքննող անկիւնը՝ ձիթենիներու տակ: Այս շրջանը այնքան եզական թուած էր վենետիկեաց առջև՝ որ շատ հաւանական նկատեր էին Բանաստեղծը գտնելու հարկին՝ Ս. Ղազար ալ դիմել. « Առաստը — կը գրէ Նազարենոյ Գինկէզդի —, Պայրընի քով կու գար յաւկարծ փնտրողս մը՝ ձեռքն ունենալով անստորոգիտ ռումսակ մը, որով ժամայորս թիւն մը կը խնդրուէր իրմէ կամ կոնտորայիկ կամ Ս. Ղազարու կղզիկին մէջ, և կամ ուր որ ինքք Բանաստեղծը փախագէր »:

Անշուշտ չեն նաև այն տպաւորութիւնները՝ զորս թողած են նաև մեր հետաքննակ

վարդապետներուն և ազգային շրջանակներու վրայ՝ Պայրընի մատուցուած այդ յարգալից ասանջակութեան ու հայերենի դասաւանդութեան լուրերը: Պոլսէն առ Ագոնց Աբբաճայր կը գրէ մեր երեկի Մխիթարեաններէն մին Հ. Ղուկաս վ. Ինճիհեան՝ 1817-ի շրջանի կարգ մը վէճերու պարագային: Լսած ըլլալով Բանաստեղծին ներկայութիւնը Ս. Ղազարու մէջ՝ կ'ոգեւորուի ան, և կը յորդորէ գրեթէ Ագոնցը՝ որ առջարկ մ'ընէ Պայրընի՝ « ... գրել ինչ անգղերէն ի վերայ Մխիթարեանի մէջ, զոր ինչ ետես աչօք, թէ զինչ նպատակ ունի Մխիթարեանի մեր, և զինչ գանձ արեւելեան ձեռագրաց ժողովեալ ունի ի մենաստանի և յայն... »: Կ'աւելցնէ նաև, որ Ագգաբեան ժողովին մէջ խորհրդակցանքներ նոյն իսկ Լօրտ անգղիացւոյն Ս. Ղազար գալուստն իմանալով՝ նպաստաւոր դիրք մը կը բռնեն Մխիթարայ Ուխտին հանդէպ:

Չենք տարակուսիր որ շատ աւելի մեծ հետաքրքրութեամբ և հաճոյցով պիտի կարդան մեր ընթերցողը Հ. Ղ. Ինճիհեան վ. ի մէջ ուրիշ նամակը: Հոս՝ Պայրընի հոգեւորած համարին հետ՝ պիտի տեսնենք այս անգամ եռանդուն Մխիթարեանին վառվռուն երեւակայութեան պատկերալից թռիչները.

« Ե՛մ համարեսցուք — կը գրէ ան — զանգղիացի զայն Լօրտ Պայրըն, քանզի անգղիացիք՝ որք աստ ի Պօլիս՝ վարկուծ մեծ ունին ի վերայ նորա, և ասն լինել առաջին բանաստեղծ ընդ համօրէն Անգղիա. ճանաչին ոմանք և զայրն, զի ամօք ինչ յառաջ եկեալ է աստ ի Պօլիս, զորմէ ետուն և նշան՝ միոյ ոտին նորա լինել թիւրեալ... Որովհետև այսպէս հռչակեալ է ի բանաստեղծութեան, յայտնի խնդրեալք ի նմա՝ նէ ոտանաւոր... Ես ահա յինչ կողմանէ առաջարկիք նիւթ ի զարթուցանել գերեակալութիւն նորա: Մինչեքմա կամեցաւ ճանապարհորդել անցանել յերուպիոյ յԱսիա, նախ զոտս իւր ամբարձեալ կոխել ի Հայաստան. ընտրեաց զճանապարհ ծովու քան զցամաքի, բայց իմացեալ թէ նէփղոնոսն հակառակ է իւրոյ ճանապարհորդութեան, քանզի սգիտութեամբ Ասիոյ առաւել ծագլից իւր ծովն նաւարկութեամբ, եկն եմուտ յաղբիակաւ խորշ ծովու ի կղզեակ ինչ փոքրիկ՝ ծպտեալ կերպարանօք ի կերպարանս արեւելեան մօրուսաւոր ծերունաց, որպէս զայլ ոմն մէնզօտ յաւուրս Տէլէմաքայ՝ նէփղոնոսն

1. Դիւան Ս. Ղազարու:

2. Թիւ նամակն 340 (Դասոթ. Հրատարակչին):

3. Lord Byron Venezia, էջ 83.

4. Թուոյր տա Ագոնց Աբբ. զր. Պոլիս 1817 փետր.

10. Դիւան Ս. Ղազարու:

իմացիալ եւ ընդգէմ ի հակատումարտի իւրով եռաժանեօք, որ են Տգիտութիւն, Նախապաշա-
րուսն եւ Ֆանադիզմոն: Մինչդեռ քաղաքում տա-
ժանեալ ի ձեռն այստեղի մօրուստարաց, զամս
հարիւր անընդհատ պատերազմելով, յոյժ սակաւ
յառաջ խաղաց. զի այն եռաժանին նորա բա-
զում փաստ տայր, ե պարտատէր զնաւ Հուսկ
յետոյ յայտոսիկ վերջին աւուրս անկարացեալ,
զաշտ իւր զարձոյց յԱնգղիայ, ծանեալ զի տիրոջ
եւ բարեկամ Նեփոլոնոսի՝ է կղզին անգղիական.
Խնդրեաց օգնութիւն յԱնգղիոյ, Անգղիան ունի
հեծանել տալ զՄինչդեռն ի վերայ առիւծուն եւ
մինջընտրուն իւրոյ, նոցա զօրութեամբն ունի
համարժակ խաղալ Մինչդեռն ի Հայաստան եւ.
հրապիրելով հուսկ յետոյ զաքստէմեայս այս
Անգղիոյ ծանօթանալ ընդ այսր կղզեակի, ե զիւր
զօքքորտեանս ընդ հելլենականին ուսանել եւ
զնայականն, ուր գտէք թաղացեալ զիւր խըն-
դրելին եւ այլն... 1:

Ինճիճեանի այս հանճարեղ ծրագիրը՝
հակառակ իւր բուռն փափագին՝ չէ իրա-
զործուած զանազան պատճառներու հա-
մար:

Պայլերն հայերէն դաստառութեամբ մե-
ծապես կը հետաքրքրուի նաեւ մեծանուն
բանասէր եւ լեզուագէտ Մեծօրֆանդէն, (յե-
տոյ ծիրանաւոր):

Այդ մասին հետեւեալ կերպով կ'ար-
տայայտուի Միխիթարեան Միխարանութենէս
Հ. Էդիպագար Տիւզեան.

Յաւուր երեքշաբթի չուեալ անտի [ի Ֆէռուս-
նայէ] ելի ի Պոլսնիս եւ... ընդ սմա [առ որ ա-
ռաքեցայն]՝ վաղվաղակի գնացի առ փոօֆէսսօս
Մեծօր ֆանդէ, որ անդէն ընդ տեսանելն սկսաւ
խօսել տաճկերէն եւ հարցանել զողջունէ վա-
նացս.... Իսկ յերկրորդում եւ յերրորդում այ-
ցելութիւնս ստէպ հարցանէր, եթէ գո՞ն գրեանք
աշխարհաբար լեզուի տպագրեալք եւ նոր քերա-
կանութիւն, ե յասել իմում այո՞՝ կարի իղծ
եցոյց ստանալոյ գրանի մի ի նոցանէ առ ի
ուսանել եւ գայն որ ինձ մեծապէս սիրելի է ա-
սէ. եհարց ե վասն լօռտ Պայլերնին՝ եթէ զհարց
ուսաւ զհայկականն, ե ես պատմեցի ըստ կարգի
վասն նորս ե վասն միւս աշակերտին, վասն
անգղիական քերականութեանցն ե վասն նորա-
չէն անգղիական բառարանին... ընդ որս ուրա-
խացայ մեծապէս՝ փութով նշանակեաց ի վե-
րայ թղթի, ե յասել իմում՝ զայնցից զի առա-
քեցեցն, ոչ՝ ասէ, ես ունիմ գրել առանձինն,

միայն զու գրեցեա վասն աշխարհաբար գրոց
ե վճարեցից զգինն »¹:

Հետաքրքրական չէ՞ գիտնալ նաեւ, թէ
Պայլերն ինչ աստիճան արդեօք հմտացր
է Հայ լեզուի մէջ:

Զմոռնանք որ Գերթոլդին նպատակը
պարզ ուսանիլ չէր. անիկա մէկէ անկի
շարժառիթներէ մղուած էր. զլիաւոր նշա-
նակեցինք՝ իմացականութեան կողմէ պա-
տերազմի յայտարարութիւն մը, դժուա-
րութեանց ժայռեր պարզապէս հարթելու
տենչով:

Հ. Յ. Ազեբեհան իր Օրագրութեան մէջ
կ'օրինակէ 1817 Սեպտ. 9 թուականաւ
իր մէկ նամակը՝ զոր ղրկած է առ Յակոբ
Չէլէպի Տիւզեան: Խօսելով իր մէկ նոր
անգղիացի աշակերտին John Brand-ի
վրայ՝ կ'ըսէ. «Սա ինքն ազնուաբարոյ
«անգղիացին» երեք ամիսք են զի ուսանի
«յինէն զմերս բարբառ. որ ե ի սակաւ
«աւուրս յառաջադէմ գտաւ բազմօք քան
«*My Lord Byron երբեմն աշակերտն
իմ*» (էջ 181): Իսկ 1819-ի Յունիս 28-ին
դիմաց կը նշանակէ. «Եկն յաշակերտու-
«թիւն նմին (այսինքն) Հ. Ազեբեհանի»
«Mr. Edward Lombe, աշխոյժ եւ սրա-
«միտ երիտասարդ Անգղիացի: Ուսաւ նա
«ի նմանէ իրր ամիս մի զհայկական բար-
«բառ, բայց յաջողակ գտաւ ի նմա քան
«զլորտ Պայլերն ե զՊրէնտ» (էջ 196):

Լուկ համեմատութեան համար մէջ բե-
րինք վերոյիշեալ ծանօթութիւնները, վասն
զի Պայլերն իր այդ ստացած հայերէնա-
գիտութեամբն իսկ՝ աննշան արդիւնքներ
չէ որ ցուցուցած է: Զանց ընելով յիշել
հայ դասական պատմադիւններու ե պատա-
մական քանի մը դէպքերու իրր հրահանգ
կատարած անգղիերէն թարգմանութիւն-
ները՝ անմոռանալի պիտի մնան առ Ա-
զեբեհան ընծայած իր կարեւոր աշակցու-
թիւնները Անգլ-Հայ Գերականութեան մը
հրատարակութեան ե Հայ. Անգլ. Գերա-

1. Թուագր առ Ազոնց Աբբ. զր. ի Պոլսի 1817
Մարտ 24:

2. Թուագր առ Գերպ. Ազոնց. զր. ի Պոլսի 1819
Մայիս 18:

կանոններն մը պատրաստութեան. և ամենէն շահեկանն ու գնահատելին՝ Ս. Գրքի Հայկ. թարգմանութեան մէջ զրոնուած կորնթացոց և առ կորնթացիս թուղթերուն անգլիերէն թարգմանութիւնները, ինչպէս տեսանք Հ. Ազգերեանի տեղեկագրութեան մէջ:

Պայրըն ուրիշ կերպով մ'ալ նպաստեց Մխիթարայ հիմնած Միաբանութեան: Իր սերտ յարաբերութիւնները բարոյական օգուտ մը բերին անոր, մանաւանդ օտարներու առջև. Ազգերեան — ինչպէս տեսանք — կ'ըսէր. «Ի սակա ուսանելոյ նորս (Պայրընի) հոյակեաց և անուն վսեմաց»: Նոյնը պէտք է ըսենք մասնաւորապէս Պայրընի վարժապետիս նկատմամբ. կը բաւէ միայն գիտնալ որ շատ անգլիացիներ վանք կու գան զանիկա յատկապէս տեսնելու. մերթ նուէրներ ալ կ'ընդունի:

Երբ նա Անգղիա կը գտնուէր 1821 Ապրիլ 9-ին՝ Լորտ Պայրընի գրավաճառը Մըրրի անոր կը նուիրէ Բանաստեղծին լոյս ընծայած քերթուածները՝ գեղակազմ հատորներով: 1829 Ապրիլ 4-ին ալ թրիեստի ամերիկեան Հիւպատոսը անգլիացի Մուր Հ. Յարութիւնին նուէր կը դրկէ՝ ի նշան յարգանքի՝ Պայրընի ամբողջ գործերը: 1836 Ապրիլ 18-ին Լոնտոնէն կը ստանայ Մալըր Մըրրէյի կողմանէ Պայրընի ամբողջական գործոց ընտիր տըպագրութիւնը՝ տասն և եօթ փոքրագիր հատորներու մէջ, որոնք այժմ կը գտնուին Մայրավանքիս Մատենադարանին մէջ: Կը կարդանք նաև 1833 յունիս 3ի օրագրութեան մէջ, որ անգլիացի մը առաջարկել է Ազգերեանի՝ զինքը նկարել տալ դասաւանդութեան դիւրեզով իր Պայրըն աշակերտին մօտ, որուն տեղը ինքը յանձն կ'առնէ ընուլ, բայց Հ. Յարութիւն կը հրաժարի բոլորովին:

Ուրիշ անգամ մ'ալ վերոնայի մօտ կը հանդիպի երեք ամերիկացիներու, որոնք իրմով կը հետաքրքրուին. ու երբ կ'իմանան թէ նա վենետիկէն է՝ կը հարցնեն թէ տեսած է արդեօք Պայրընի ուսուցիչ Հ. Յարութիւնը, որուն անունը Նիւ-Եորքի

լրագիրներէն լսած են: Ստուգիւ՝ անակնկալ մը կ'ըլլայ՝ երբ կը կուսնեն թէ ուղղակի անոր հետ է որ կը խօսին, և կ'ուզեն այդ հանդիպումը հաղորդել նաև Ամերիկեան լրագրաց:

*
**

Ինչո՞ւ այսքան զարմանք. — վասն զի այդ ամէնը Պայրընի նման հսկայի մը շուրջ կը դառնայ. վասն զի իրաւամբ յոյժ թանկագին նկատուած են անոր այցը, կենակցութիւնն ու Հայ լեզուն ուսանիլը Ս. Ղազարու մէջ, այդպէս ահա մեծարուելու Մխիթարեան Ռիտուս՝ Անգղիոյ փառապանծ Քերթողին կողմանէ:

Չ'արժեք ուրեմն՝ Մագէլի այն եռանդուն զգացումէն յորդորուած՝ անգամ մ'ալ մեր կողմանէ կրկնել իր վաղեմի առաջարկը, որ «Երբ կ'այ տեղ մը ամբողջ Երոսկայի մէջ, յետ Լոնտոնի և Միսսոլոնկիի, որ հարկ է որ կանգնուի Պայրընի արձանը, վիեննէ տիկն է այն»....

Բայց չէ՞ որ այն ևս առ այդ յարմարագոյն վայր նկատած է այս կայմիր կղզին:

Ազգասէր անգլիացիներ, ձեռ վեհանձն աջակցութիւնը միայն կարող պիտի ըլլայ սակայն իրագործել զայն. մինչ Մխիթարեան Միաբանութիւնս պիտի օրօքար ու պարծանքով պիտի ընդունի հայրենի կղզեկիս վրայ գերահանձնար Պայրընի պերճագեղ արձանը:

Հ. ՂԱՅՆԴ ՏԱՅԵԱՆ



LORD BYRON AT S. LAZARUS



A sanctuary. — Proposal by Mackay. — Archival documents. — Byron's letters. — Endeavours. — Byron at S. Lazzaro. — First conversation. — From Father Paschal Aucher's diary. — Intimacy with the Monastery. Impression abroad. — A proposal of Fr. Luke Ingigian's. — Mezzofante's enquiries. — How far was Byron on in his Armenian studies? — The moral assistance he gave. — An invitation.

Translated from the Armenian

Not one of the strangers who arrive in Venice to admire the glory of the Doges and the splendour of the Queen of the Adriatic leaves it without paying a visit to this smiling island which is the most cheerful and beautiful amongst those scattered over this mirror-like lagoon.

From the very first, he is filled with unusual curiosity. His unflinching companion is a more or less brief guide-book. Sometimes even a special Guide and Interpreter accompanies him and points out to him one by one the charms which Venice holds in the bosom of Art and of Nature, so it is the visitor's fixed intention to see the Armenian Monastery.

If it is from several points of view a sanctuary for Armenians, a museum of precious relics and national treasures, so also to the English and English-speaking peoples it is a real place of pilgrimage because it holds the most vivid and speaking memories of Byron. Not only for English-speaking people but for all foreign nations it seems to be a natural, inevitable duty to devote a moment to thought and meditation on Byron's memory. Do not even the guide-books of the city try to direct the attention of visitors to it in the most emphatic manner or with a note of mystery, lest he should change his mind about a most important excursion; lest he should fail to see an instructive spot, or miss an enjoyment and pleasure that he will get nowhere else?

We have before us one of these guide-books printed at Treviso. Whereas one part of it has simple headings, the page on S. Lazzaro opens with this

title: — "Where Byron dreamt!., Doubtless moved by the same thought an English writer, George Erik Mackay once made the following proposal. "If there is a "place in all Europe, where, after London and Misolonghi, Byron's monument ought to stand, that place is "Venice. Any part of Venice will do: "the Lido, the Public Gardens, or the "Island of St. Lazarus. But if Venetians "are indifferent as to the site of the "monument, let the Armenians choose "it in God's name!.,

Byron's visit and his learning Armenian in the Monastery of S. Lazzaro is known the world over. First of all through his letters written from Venice to Moore and Murray, but up to the present there have been no details given. Even in Mackay's book the information is scattered up and down; it is the superficial history of the monastery that takes up most of the guide-books and of an Article in the *Pasmareb* in the year 1846 (page 296).

We are therefore glad that this Centenary of the Poet gives us the occasion to publish some particulars and present to the public the true and correct facts, seasoned with some interesting information.

All this, we may say, is corroborated by the documents of the Archives of the Monastery, the chief of which, as the true source, is that of Byron's Mechitarist teacher, the excellent English scholar Dr. Paschal Aucher, brother of

1. Lord Byron at the Armenian Convent, Venice 1876.

the other renowned Mechitarist Father, Dr. J. Baptist Aucher.

Naturally, from this point of view, the published letters of Byron are documents of primary importance. Of these letters several portions dealing with Armenian subjects have been printed at different times at the printing office of the Monastery in the English language, but we have thought it neces-

sunset in November. Like all foreigners Byron is attracted by the charms of an Armenian centre, as he says: "I was much struck - in common, I believe, with every other traveller - with the society of the Convent of St. Lazarus". With this exception, however, that whereas what moves other visitors is only a great curiosity and a desire for amusement, Byron is above all driv-



Պայրըն չափերէն կը սորվի

Byron studies the Armenian language¹

sary, on this occasion to look through the Byron letters in the English collections, and we are pleased to have found some portions on Armenian matters, short but most valuable, which had been previously overlooked. In the present number of the *Pazmareb* they are published together with those previously printed and a new translation into modern Armenian.

Before the winter of 1816 came to Venice, a fine figure of a literary Englishman, the ever young poet, Lord Byron reached the city. It is near the

en on by a longing to lull his stormy mind with the soothing breeze; to fortify his moral power in the lovely garden of the Eden laid out by Mechitar.

With what a state of mind Byron arrives in the City of the Doges, he himself writes: "On my arrival at Venice in the year 1816, I found my

1. We do not know when, where and by whom this picture was painted.

2. Byron's Preface to the Armenian Grammar.

"mind in a state which required study, "and study of a nature which should "leave little scope for the imagination, "and furnish some difficulty in the pursuit," (Byron's Preface to the Armenian Grammar'). In this disposition, a few day after he gets to Venice, one cloudy day towards evening he steps into a gondola to pay a visit to this Island of S. Lazzaro breathing so fully the breath of the East. Byron is received by a Priest who speaks English, it is Fr. Paschal Aucher, his future teacher. He finds a friendly reception for about two hours by the monks and afterwards he takes leave with a promise to return again.

The next morning he comes back to the Monastery in a gondola and his first conversation with Fr. Aucher is about Armenian history and literature. His sympathetic mind being interested in the fate of tortured peoples, is fired to take up the study of the language and history of our nation and so this new motive is added to the other impulses urging him which moved him during this visit to propose to the priest entertaining him that he should come to live in the monastery if it were possible without giving any trouble. Upon this the monks appear embarrassed, considering various circumstances and monasterial rules; The giving of all sorts

of other facilities is however readily promised, he might if possible come every day to the Monastery. The Poet agrees and immediately Fr. Paschal Aucher is appointed his teacher and according to Mackay's information two rooms for study and rest are placed at his disposal*.

But let us go to the authentic source which flows from the writings of Byron's own above-named teacher; we quote the very words from his unpublished autobiographical diary: "December 2. "The famous and most celebrated Lord "Byron, whose works are purchased "at gold value, coming to visit our "convent, expressed the desire to study "Armenian with him* He wished also "to live in the Convent. But because, "none of the monks knew him yet, he "was told he would have to come every "day from Venice and learn Armenian "in that way. And he began to come "for fifty days*. He used to study two "or three hours and delighted chiefly "in conversations, to quiet his mind. "He was a young man quick, sociable, "with burning eyes. And though club-footed, he was handsome. After having learned the Armenian alphabet, "Byron asked his teacher to have printed at his expense the Anglo-Armenian grammar Father Paschal had "written in London. And Byron used

1. Fr. Paschal Aucher said among other things, that Byron wished to know the Armenian language to read selected works of Armenian poetry. But in one of Fr. Luke Ingigi's letters another aim is attributed to the poet: «We have heard from you», said he, «that Lord Byron studies and wishes Englishmen to study the Armenian language». Dated 10th April 1817. *Unpublished letters of the Monastery central Records*, sent to Abbot General Akonz.

2. To give an idea of the whole period of the hospitality given to Byron by our Congregation we here quote the following lines from a letter of introduction of the Poet. He writes to Mr. Murray referring to Fr. Sukias Somalian and Fr. Sarkis Theodorian: «If you can be of any use to them, either amongst your naval or East Indian acquaintances, I hope you will so far oblige me, as they and their order have been

remarkably attentive and friendly towards me since my arrival at Venice» (June 8th 1817).

3. Fr. Pascal Aucher speaks of himself in the 3rd person.

4. The date (1816 Dec. 2d) indicated by Fr. P. Aucher as that of Lord Byron's first visit to, and the first lesson in Armenian at the convent is confirmed by the poet himself, in his letter to Mr. Murray in Dec. 9th 1816: "I have begun, and am proceeding in a study of the Armenian language," "In the morning go over in my gondola to hobble Armenian with the friars of the Convent of St. Lazarus," Besides that, he writes of his translation of the Epistle of the Apostle Paul to the Corinthians: "Done into English by me, January, February, 1817, at the Convent of San Lazaro," But all this shows that the fifty days mentioned by F. P. Aucher are not very well calculated.

"to correct with his teacher, the proofs of the printed sheets. Afterwards, he asked him also to translate into Italian, selected extracts of Armenian poetry for the knowledge of which he had wished to learn that language. Father Paschal translated many extracts ancient and modern, amongst which he was not satisfied with the song *Hanjarah* on the maid *Hripsimiah*, of *Shenorhali* (St. Nerses the Gracious) - After that Byron begged for the translation of another Armenian - English grammar, to improve the instruction of the English people. The Father made the the grammar, arranging the rules in the Italian language from which Byron was translating them into English. When the grammar was terminated, Byron with his teacher's help, translated from Latin, the two 3d Epistles of Paul the Apostle to the Corinthians¹ and some extracts of our ancient Fathers' works, and desired to put these translations into his grammar as practice for Englishmen. Then, at his professor's request, he composed the preface of this grammar in English. But as he made fun of the Turks and Persians, F. Paschal refused to have them printed And although Byron had promised to make another harmless preface for the book, he was disheartened and on that account would not come back again the monastery² Thus the grammar was left in MSS. and Byron did not pay the promised printing expenses³. One day Byron, was introduced to the Abbot General to present his respects. He was very much pleased at the Abbot's good looks and words. Another day, while visiting the Library, he promised his teacher

"he would send him from England the English classics, to enrich the Library. But some years afterwards, he died in Greece. In the poet's mouth, Moses, the Christ, Mohammed, Luther, Calvin and Voltaire as well as his Anglican faith had an equal worth. In Venice, he lived a dissolute life. After his death, the English published the letters he wrote from Venice to his editor, Murray, in London, . Leaving all comment on this authoritative account to our readers we shall now go on to consider how close was the intimacy between Byron and the Fathers of S. Lazzaro. Fr. P. Aucherian writes on February 15th 1817 to Abbot Akonz "We are pleased with the good advice of the Lord⁴, . This was a very natural result when we think that he lived for 50 days continuously S. Lazzaro. "A whole winter, . says the editor of his letters, "going out every morning alone and getting into his gondola, which he rowed himself, he went towards the Island of the Armenians⁵, . and here he passed hours partly with the Monks who surrounded him, and a part of his time he gave to meditation on the various phases and secrets of life, at one corner of the garden under the olive trees. This period seemed so singular to the Venetians that when it was necessary to seek the Poet they applied directly to S. Lazzaro. "In the morning, - writes Nazareno Menghetti, - a gondolier approached Byron with an anonymous note in which an interview was asked for, either in the gondola, at the Island of S. Lazzaro or wherever the poet desired⁶, . The impression, too, which the news of the respectful hospitality and teaching of Armenian to Byron has been made on our priests

1. Byron explains: "I had also the Latin text, but it is in many places corrupt, and with great omissions, .; (Letter).

2. These remarks of Fr. Paschal Aucher seem unfounded. Byron in his letter dated March 25th 1817 writes: "Illness has prevented me from moving this month past, and I have done nothing more with the Armenian, ."

3. Fr. P. Aucher adds afterwards, in the Ap-

pendix to his Journals that "the same Lord Byron had given him a thousand Francs for the printing of the grammar as well as for fees for his tuition. That sum is just the sum promised before, as Byron says: "It cost me but a thousand francs - French livres (Jan 2. 1817).

4. St. Lazarus, Archives.

5. Letter N. 340; the Editor's note.

6. Lord Byron at Venice, p. 83.

living abroad and in our National circles was not inconsiderable. From Constantinople Father Luke Ingigian, one of our famous Mechitarists, on the occasion of certain disputes writes to Abbot. Having heard of the presence of the poet at S. Lazzaro he is encouraged and exhorts the Abbot General Akonz to make a proposal to Byron "to write something in English on our Congregation, - what he saw with his own eyes, - what is the object of our Congregation and what treasures of Oriental manuscripts are collected in our Monastery and so on, &c. He adds, that in the National Council on hearing of the coming of Lord Byron to S. Lazzaro they take up a favourable position towards our Community.

We do not doubt that our readers will read another letter of Father Luke Ingigian with curiosity and pleasure. Here as well as Byron's world-wide fame we shall see this time the picturesque flights of the lively imagination of the fervent Mechitarist: "We must hold the Englishman, Lord Byron, -" writes Fr. Luke Ingigian, - as a great personage, because Englishmen here (in Constantinople) hold him in great esteem, say he is the greatest poet of all England. Many know him personally, - for he came some years ago to Constantinople - and they notice he is club-footed, and seeing that he is so much renowned in the poetic art, ask him to write some poem on our religion. And to awake his fancy, I propose for my part the following subject:

"The goddess Minerva wished to cross over from Europe to Asia, taking her first step in Armenia. She chose to travel by sea instead of by land. But hearing that Neptune was opposed to such a voyage, because thanks to Asia's ignorance, the sea prospered by navigation; she came to a little island, near the shore of the Adriatic sea, under the disguise of an old

"Oriental, with a great beard, like another Mentor of Telemaque days. As soon as this was known to Neptune, the god appeared suddenly before her, to fight her with his trident which was ignorance, wrong and fanaticism. Minerva, tired of this struggle which lasted a hundred years, got on very little, for the trident did her much harm, and wore her out. Finally, in those last days, feeling unable to do more, she turned her eyes towards England, and understanding that Neptune's mistress and friend was the English island, she begged England's help. England must place Minerva on her Lion and her Unicorn. With their power, Minerva will boldly march on to Armenia, *et cetera*, inviting the scholars of this England to become acquainted with this little island, and to learn with Greek, also Armenian, when England will arrive at her desire".

This well conceived project of Ingigian, contrary to his warm desire, has not been executed for many reasons.

Byron's study of the English language greatly interests the renowned philologist and linguist Mezzofante. In this respect, this is how the Father Eleazar of the Mechitarist Congregation expresses himself. "Tuesday, leaving Ferrara, I came to Bologna and with him". "I immediately went on a visit to Professor Mezzofante", who as soon as who as soon as he saw me, began to speak in Turkish, and asked me about our convent. At my second and third visits, he inquired if we had books printed in modern Armenian and a new grammar. On my affirmative answer, he showed a great desire to have some of these books so as to learn the Armenian which was a language very pleasing to him. He asked me also about Lord Byron and how he had learned Armenian, and I told him about Byron and the other pupil, and about the English grammars and

1. Letter written to Abbot General Akonz from Constantinople, Febr. 10th 1817. St. Lazzarus, Archives.

1. To whom I was sent on a mission.
2. Joseph Mezzofante, a very learned scholar and polyglot. Afterwards a Cardinal, 1774†1849.

"the English Dictionary recently edited, with which information he was much satisfied, and took notes. And when I said, I shall write to the monastery to have the books sent, - No, said he, I shall write myself to the convent. Write only for the books on modern Armenian and I will cover the expenses.,,

speaking of a new English pupil of his, John Brand, he says: "This noble Englishman has been learning our language from me for three months, who has shown himself more diligent in many ways than my former pupil my Lord Byron., (page 191). While in 1819 on the 28th of June he makes this entry "There came to him (that is to Father Aucher-



Գ. ՌԱՅՆԱՐՏ. — Պալլընի ծովալողից միտքը Ս. Ղազարու ծիթենիներում տակ սփոփուած.

C. REICHART. — Byron's tempestuous mind is soothed under the Olive-trees of St. Lazarus.

Would it not be curious to know also how far Byron got in the study of the Armenian language?

Let us not forget that the Poet's only intention was not to learn the language; we have said he was impelled by more than one motive, and we named as the chief one a declaration of war on the part of his mind only for the sake of crushing the rocks of difficulties.

Father Aucherian in his Diary copies a letter of his dated Sept. 9. 1818 which he had sent to Hagop Tchelebi Duzian;

rian for tuition Mr. Edward Lombe a clever and alert young Englishman. He learnt the Armenian language from him in about a month but he was more successful in this than Lord Byron and Brand (page 196).

We have only quoted the above passages for the sake of comparison because Byron even with his knowledge of Armenian, has shown not insignificant fruits. Not to mention his translations into English, done as exercises from classical Armenian and of some historical events, the important assi-

stance he gave to Father Aucherian in the publication of an Engl.-Armen. grammar and in the preparation of an Arm.-English grammar will never be forgotten, any more than the most useful and valuable English translation of the "Corinthians," which are found in the Armenian translation of the Bible, as we have seen in Fr. Aucherian's description.

Poet in beautifully bound volumes. And on April, 4th 1829 the American Consul at Trieste, Mr. Moore, an Englishman, sent as a present in token of respect to Fr. Aucherian the Complete Works of Byron. Again on April 18th, 1836 he received from London, from Mr. Murray a fine edition of all the Works of Byron, in fourteen small volumes



Գայլընի ջիթենեաց Բլուրը արդի ժամանակիս մէջ

Byron's Olive-tree hill at St. Lazarus, as it is at the present day

Byron helped the Congregation founded by Mechitar in another way, too. His close relation was a moral support to them especially before foreigners; Father Aucherian says: Through his (Byron's) studies the name of the Monastery too was spread abroad. The same must be said, especially, about the teacher of Byron; it is enough to know that many English people came to the Monastery especially to see him; sometimes he received presents too. When he was in England in 1821 on April 9th Lord Byron's publisher, Mr. Murray gave him the published Poems of the

which are now in the library at the Monastery. We read also in the diary on the 3rd of June 1833 that an Englishman made an offer to Aucherian to have him painted as a teacher by the side of his pupil Lord Byron for whose portrait he proposed to sit himself. But Fr. Pascal refused absolutely.

Another time, near Verona he meets three Americans whose curiosity he arouses and when they hear that he is from Venice, they ask him if he had seen Byron's teacher, Father Paschal, whose name they had seen in the New York papers. It is a real surprise when

they guess that it is to him they are speaking and they want to report the meeting to the American papers

* *

Why this surprise? — Because all this revolves round a giant like Byron. Because his visit, his life here and his learning of the Armenian language have, with reason, been considered extraordinary. Hence the honour the sublime English poet brings to the Mechitarist Congregation.

Is it not worth while for us then, exhorted by that sentiment of Mackay,

to renew his former proposal? "If there is a place in all Europe, where, after "London and Missolonghi, Byron's monument ought to stand, that place is "Venice". But would he not have considered this red island as a suitable spot for the erection of such a monument?

Patriotic Englishmen! Only your generous support will be able to carry out this design; while the Mechitarist Congregation will willingly and with pride receive on the Island this magnificent statue of the sublime Poet, Byron.

FR. LEO DAYAN

ՀԱՄԱՍՈՑ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐ

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ

Լորտ Պայրընի երկրաւոր՝ թէ ոչ համարին այլ մահուան Ա. Գարաղարձին առթիւ, ինչպէս զրական աշխարհն, նոյնպէս Ս. Ղազարու կղզեակը կը մասնակցի արծարծելու անոր յիշատակը հասարակութեան հանդէպ:

Եթէ օտարազգի բանասիրաց առջեւ՝ Մխիթարայ Մայրավանքն բարեացակամ համբաւ մը կը վայելէ, սա անբաժան է անշուշտ Անգղիայ անցեալ դարու ամենէն նշանաւոր բանաստեղծի զրական կեանքէն:

Այս այս պատճառաւ, բազմաթիւ համալսարանական այցելուք՝ վանքերնուս շեւր մը կոխած վարկենին շահագրգոռութեամբ մը կը հարցնեն առաջնորդ վարդապետին. «Իրաւ է թէ Լորտ Պայրըն հոս ասպնջակառու է»: — Զարմանալի է սակայն և ուշադրութեան արժանի՝ լսել բացազանչութիւններն ասոնց, երբ կ'առաջնորդուին այն սենեակին, ուր հղանակի մը շրջախին (1816) բանաստեղծն հայերէն լեզուի ուսման հետեւէր է, օգնութեամբ նշանաւոր անգղիացի մեր Ալգերեան Հ.

Յարութիւն վարդապետին, Պայրընի վայելչագեղ և խրճախ կենդանագիրը դիտելով, սապէս կ'արտայայտուին, ըստ իւրացանչիւր մտայնութեան և համոզման. «Յիշուի մեծ հանճար մ'էր սա, ափսոս որ կարճատե կեանք մ'ունեցաւ» կ'ըսէ ոմն: — «Ալգերական ստահակ մ'էր, որ եթէ կանոնաւոր կեանք մ'անցընէր, անշուշտ շատ աւելի կ'ապրէր» կ'ըսէ ուրիշ մը: Երբորդ մը պարզամտաբար կը հարցնէ. «Արդեօք Ձեր Միարանութենէն էր այս անձը?». . . Էն, Էն, Մ'ենք՝ արգահատելով երբորդին ազդեցութեան՝ երկու նախորդներուն լիուրի իրաւունք պիտի տանք: Ո՞րքա՞ն, արդեօք մասամբ մը՝ սանձ դնելու համար չէր Վենետիկ անցուցած խառնակեաց կեանքին՝ որ կը դիմէր ստէպի Ս. Ղազար: Սըղեակ խոստովանութիւն մը կրնանք համարիլ այս մասին իւր մէկ թուղթն, յամին 1816, բարեկամներէն մէկուն:

«Զբօսանքի մը պէս ամէն օր Հայերէն «լեզուն սորվելու հետ եմ հոս Հայոց «վանքը: Տեսայ որ միտքս զբաղեցնելու «համար մէկ դժուար աշխատանք մը պէտք «էր ինծի. ասկէ զատ դժուար զբօսանք չէի «կրնար գտնել հոս: Հայերէնը հարուստ «լեզու մըն է, կ'արժէ որ մարդ անիւս «սորվելու համար աշտատի». . . Էն: